ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՄԱՅԻՍԻ 22-ԻՑ 24-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԼԱՅՊՑԻԳ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Արմեն Սիմոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2024թ. մայիսի 22-ից 24-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Լայպցիգ)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

Միջազգային տրանսպորտային ֆորումի քարտուղարություն

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Միջազգային տրանսպորտային ֆորումի ամենամյա գագաթնաժողովին մասնակցություն

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Տեղի են ունեցել երկկողմ հանդիպումներ, քննարկումներ և առանձնազրույցներ մասնակից երկրների ներկայացուցիչների հետ: Առանձին հանդիպում և քննարկում է տեղի ունեցել Միջազգային տրանսպորտային ֆորումի գլխավոր քարտուղարի և քարտուղարության ներկայացուցիչների հետ:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Քննարկման առանցքային թեմաներն են եղել ՏՆԵԿ թույլտվությունների ամբողջական թվայնացման, դրանց կառավարմանը և գործնական կիրառությանը վերաբերող հարցերը, էկոլոգիապես ավելի մաքուր տրանսպորտի դերակատարումը: Ներկայացրել եմ Հայաստանում նախորդ հանդիպումից ի վեր կատարված

աշխատանքը, Հայաստանին տրվող ՏՆԵԿ քվոտաների քանակը, քննարկվել են Հայաստանում միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումներ իրականացնող վարորդների վերապատրաստման և որակավորման բարձրացման նպատակով ուսումնական կենտրոնների ստեղծման հարցերը, ինչպես նաև երկկողմ հանդիպումներ եմ ունեցել Միջազգային տրանսպորտային ֆորումի անդամ երկրների պատվիրակությունների և դրա ղեկավար կազմի հետ: Մասնակցել եմ նաև Ճանապարհային անվտանգության թեմայով պանելային քննարկմանը:

Ելույթով հանդես եմ եկել և ներկայացրել եմ ՀՀ Կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ստորագրված փաստաթղթեր չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը

30.05.2024թ.